

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԽԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թաղմ. 1925, էջ 159)

ՃԺԷ.

Շատ կարևոր թուղթ մ'է հետևեալը:

Նոյն կը տեղեկանանք, որ Բենեդիկտոս ԺԴ. մասնաւոր Քննիչ կը կարգէ Հռովմայ մէջ մեր Արքայապետ կաթողիկոսը, «սա ի որսնել և քննել զեպիսկոպոստոսն և զեկեղեցականն հայոց, սկսեալ ի մկրտութենէ մինչև վերջինն աստիճան» և այլն: Քահանայապետական այս լուրը կարգադրութեան պատճառներն են — ինչպէս կ'իմացուի — առ Ս. Փահ հասած կարգ մը աննպաստ լուրեր, որոնց կասկածի ենթարկած էին Հայ կղերականներէ ոմանց ընդունած Ս. Խորհուրդները և Զեռնադրութեանց օրինաւորութիւնը: Արքայապետ կաթողիկոսի կատարած ջննութիւնը զժրախտ արդիւնք մը կու տայ յանձին Հայ բարձրաստիճան ծանօթ եկեղեցականի մը՝ Սուրբիաս եպիսկոպոսին, որոյ ընդունած Խորհուրդները անվաւեր կը հռչակուին. ըստ այնմ իբր հետևանք նոր կարգադրութիւններ կ'ըլլան յետոյ:

Երկրորդ կարևորութիւն մ'ալ, զոր կը ստանայ մեր վաւերաթուղթը, այն է՝ որ Ս. Փահանայապետը կը պատուիրէ Հռովմ գտնուող բոլոր արևելեան ազգերուն, որպէս զի ամէնքն ալ իրենց զգեստով և արարողութեամբ կատարեն թէ՛ պատարագը և թէ՛ միւս ամէն արարողութիւնները:

Այս լուսամբու հրահանգը պէտք է նախամուտ նկատենք տասնեակ մը տարի վերջ Բենեդ. ԺԴ.է հրատարակուած այն հռչակաւոր և յաւերժական յիշատակաց արժանի կոնդակին՝ (Մատուցան ի ժողով յարգելի կղերաց) զոր ուղղեց «Առ Միսիո. «նարս կարգեալս ընդ արևելս յաղագս պահպանութեան Միսից եկեղեցւոյն Յունաց» և այլոց Արևելեայց» (հրտ. յամին 1755 Մարտի 13): Նախամուտ կոչեցինք, որովհետեւ Ս. Հայրն ինքնին այդ կոնդակը տուած ատեն՝ այսպէս կ'ըսէ. «Զնոյն և մեք» հեղինակութեամբ մերով հաստատեցաք, շարժեալք մանաւանդ ի վճռոյն եղելոյ» և յայլով՝ նուազի ի ժողովոյ անտի տարածման հաւատոյ, ի 31 յունվարի յամին ճ 1702. որ յայմենոէ բազում անգամ հաստատեցաւ և նորոգեցաւ:

Հանրական թուղթին հայերէն թարգմանութիւնը կատարած և 1755-ին հրատարակած է ի Հռովմ Միս. Ուխտէս Հ. Վրթանէս Ասկերեան: Նոյնը երկրորդ անգամ հրատարակուեցաւ 1914-ի ԲԱԶՄԱՎԱՅՊին մէջ (տես էջ 379. 417):

Փերպաստուելի և զերյարցելի տեսանոյ իմոյ մեծաւ յարգութեամբ տղոյն մատուցանեմ

... Ներկայ գրիւս ոմանս իբս պարտ է ինձ ծանուցանել զեղբարեութեան ձերում, նախ զեռապայծառ Պատրիարքին կողմանէ, նախ յայտ լիցի որ առաջ քան զերկրորդ անգամ անկարծակի սաստկապէս հիւանդանալն իւր. փափն իւրեան իշխանութիւն տվաւ

առ ի որոնել և քննել զեպիսկոպոսոսն և զեկեղեցականս հայոց ըսկսեալ ի մկրտութենէ մինչև վերջին աստիճան, որ քաղաք, որում անձն է որոյ աղաքաւ առեալ են զկարծի և այլն. արար գքնութիւնս ամենեցուն. բայց ի միուն զամենեքին օրինապէս առեալ են զկարգսն. և այն մէկն իսկոյն հրամանաւ հայրապետին արգելեցաւ պատարագելոյ և խոստովանանք լռելոյ¹. եւ զատկին պիտի վերստին օրհնէ, տալով նմայ զամենայն սուրբ ատոմանս. և պատճառն է զի օրհնողն իւր առանց ընդունելոյ զկարգ քահանայ, նայութեան եպիսկոպոս եղեալ է. այս բանս հոռւ ամենայն արեւելեան ասպաց յայտնի է, ևս բազում Ֆրանկաց. բայց տեղդ կարծեմ զեռ ևս չէ լսվաց, վասն որոյ խնդրեմ անսոցն ի ներքոյ կերոյս Ս[ուքիաս] եպիսկոպոս:

Եւս յայտ առնեմ զի Փափն հրամայեաց ամենայն արեւելեան ասպաց հոռւ եղելոց, զի ամենեքեան իւրեանց ըսկէստիւ և արարողութեամբ առնեն զպատարագն և զայլ եկեղեցական աղարողութիւնսն, մկրտութիւնն, վերջի օծումն, թաղումն և զատկական սրբութիւն անելն առէն ազգ իւր եկեղեցին. վասն որոյ ամէն ազգն մէկ մէկ քուսաթ կար. քէցին, հանդերձ քննութեամբ առաջի կարտինալ Վիքարին. վասն մեր ազգի տէր գրիգորին ոչ կոմեցաւ. յանձն առնալ քուսաթ լինիլն. վասն որոյ մեք կարտինալն զստեփան վարդապետն առաջ էա՞ծ. նախ քան զայս, Չ ամիս կայ որ քրդորմամբ և աշխատութեամբ տօն տօմէնիքոյին և միշնորդութեամբ կարտինալն Կարաֆային հոյն ըստեփան վարդապետն փոփականմտայի քօլէճն ի վերայ մանկանց հայոց լէթթոր կացուցեալ էին, բայց առանց եկամուտի. վասն որոյ մեր կարտինալն կամեցաւ տէր գրիգորին փառոց սորայ վերայ անել և տէր գրիգորին ճանապարհ դնել ...:

Հոգեւոր Տէրն յամս յամս քօնթումաշէի պատճառաւ դիտաւորութիւնն փոխեց զենտիկի զալու, այս ամսին վերջն կամի ճանապարհորդ լինիլ ալիկուոնոյու վերայոյ՝ իրաւի ճշմարտն ասեմ հայր գերայարգելի որ եզակի և զովութեան. արժան մարդ է, եթէ այլ անձանց և այլ տեղաց այլ և այլ բան լինն չի հաւատաս, այլ զրոյժ երբ ժամանակ ունենամ ծանուցանեմ հրամանուցդ զհատկութիւն սորին ...:

Աղայ պետրոսն եւ զատկին կամի ճանապարհորդ լինիլ, կարծեմ ինքն գրիւնց է հրամանուցդ, եթէ բերէ պատկերներն սորայ հետ ուղարկեմ ...:

խոնարհագոյն ծառայ

Հոռմայ, ամի տեառն 1743, Արբիլի 13

[պատկերահան] Յոհաննէս

ԺԺԸ.

Բնականաբար ուղղակի պիտի փափագէինք զիտնալ, թէ ի՞նչ պատճառաւ Աբրահամ Պետրոս Ա. չէ կրցած ի գործ դնել Ս. Ղազար զալու դիտաւորութիւնը: Հետագայ իր իսկ նամակին մէջ այդ մասին զոհարում կը գտնենք:

Նամակագիրս կը տեղեկացնէ նաեւ առ Մխիթար՝ Ս. Գաւհէն ստանձնած պաշտաման գործադրութեան աւարտումը: Յատկապէս դիտել կու տանք հոս, որ Աբրահամու ըարժը պաշտօնը լուի Հոռվմայ Հայ Եկեղեցականութեան չի հայիր, վասն զի ան կը տարածուի այսպէս. « ի վերայ նպրապատաց ոչ միայն ի յարեւելս այլ և ի Հոռմ »:

1. Այս դէպքը կը պատճառէ նաեւ Աղաշայ Պետրոսի եւ Մխիթարի դրած մէկ նամակին մէջն այսպէս. « ... զտրեմա եպիսկոպոսն եւ ազգիւն ին տեմ որ ոչ պատարաց կառէ և ոչ խօստօմանութիւն լսէ և թէ զպատճառն կամի զիտն նայ, ասաց հոգեւոր Հայրն թէ ոչ է ծննդաբեռն, ստուկ աշխիթն խալպ և անհաստատ եպիսկոպոս էրէ և նայ վօփօր զտրեմա եպիսկոպոսն ձեռնադրած ըլլայ. վասն որոյ ազգիւնալ է զաւաւրն ... » (Գր 1743 Մարտ 28, Հոռվմ):

1743 ապրիլի 21 [ի Հոռովմ]

Գերյարգելի եղբորդ իմոյ արքանօրն
Ողջուն

Երևի թէ զրկեցեալ գոլ փափագօղն ի տեսութենէ փափագեցելոյն. զի Սլբութիւնն¹ սիրոյ ե ցուակցութեան ե խրատական կերպիւ ասաց թէ մի գնար ի վէնէնցիեա, վասն զորաց որք կան. եւս նազարէթ² սահմանեալ են. զի Գ նազարէթն բաւէ զոր կրեցեր. լինի թէ չուտով վերջ լինի, զոյ յոյս տեսանել զգերյարգելիդ կամօքն աստուծոյ. ե պատմէ մեր սիրելի պարոն աղաջա պետրոսն զամենայն իր զոր ետես ե լուաւ. ե յղեց. [ից...] զերկու կօնտակն սուրբ փափին. խնդրե[մ.] թարգմանիցեք ի հայ բարբառ ե չուտով յղեսցըիք ի Հոռով մեռն ամենապայծառ վրդանէս եպիսկոպոսին, եթէ կամիք յոյժ հանելի շնորհ է մեզ. էրէմիեա վարդապետն յարիւն թքնէ. զրի քահանայից իսպաթան, հրամանաւ ամենապետն վիկարին ե նորին կառիւ. իսկ մանուկն որ եբեր բնդ իւր, եմուտ ի դպրատուն սուրբ փողովոյն. ե զգեցաւ մարտի 25. իսկ կարապետ մանչն յուսանի մօտ սիրելոյն մեր պարոն յովանէսին. զսուրբ աջդ համբուրեն. ե ես կատարեցաւ քննութիւնն ամենից՝ եկեղեցականաց պաշտօնից ե կարգաւորութեանց, զոր հրաւայեալ էր Սլբութիւնն ե տունալ զրիւ բացարձակ իշխանութիւն ի վերայ յուղափառաց ոչ միայն ի յարկիւս այլ ե ի Հոռով. բազում ջանիւ կատարեցաւ թատուծով. յոյժ սիրով ողջուն ե օրհնութիւն վերապատուելի յովանէս վերդապետին, ծանոյ նմա, յորժամ առողջանայ երէմիեա վարդապետն չուտով զալոց է որպէս ե խնդրեաց. ե ամենից հաւարակութեան գերյարգելոյդ Ողջուն ե օրհնութիւն. ե եթէ գիտես երբ չուելոյ են գերաւ պայծառքն մինաս եպիսկոպոսն ե մօնսինեօնն որ է պոնայ, եթէ կամիս զրեւ ինձ. դարձեալ մեր սիրելի պարոն խաչին ողջուն ե օրհնութիւն, շնորհ առնէ եթէ գիտէ ծառացանէ. վասն չորհացակերի որդի[...]. պետրոսին կողմանէ ուր լինիլն ե որպէս կեալն. վերջ տամ բանիս. [խնդրելով] յստուծոյ զամենայն երջանկութիւն յար գերյարգելոյն. [ե միշտ] ժտեմ զազօթս ի Հասարակութենէ ե Մեամ ամենայնի պատրաստ

Դատայ

Աբրահամ Պետրոս Աթոնեան

Ա. Պետրիարք Հայոց հաստատեցեալ

ի գահէն Պետրոսեան

ՃԺԹ.

Մեր կարծիքով՝ այլեւս ստուգուած պէտք է համարիլ վանքիս Աւանդատան Ս. Յովսէփայ պատկերին հեղինակը. Հետագայ գիրը համոզիչ վաւերաթուղթ մը կը նկատենք այդ մասին:

Գերյարգելի ե. գերապատուելի տեսանդ իմոյ յոյժ սիրով ե խառնախառն ողջոյն

Յայտ առնեմ վերոյ գրեցեալ գերյարգելի Հօրդ իմոյ որ ահա սրբոյն Պէնէտիֆատոսի ե սրբոյն Ուփսէփայ պատկերքն ըստ տկարութեան իմոյ արարեալ թէչլիմ ասի հանդերձ զուժուրովն ի ձեռն ազայշայ Պետրոսին որ բերէ հասուցանէ հրամանացդ. խնդրեմ իրք

1. Այսինքն Բենեդ. ԺԴ.:

2. Lazaret ե Զգուշարան (մօնափախ ե այլ տարափոխիկ հիւանդութեանց դէմ):

3. Յիսակեր Եւստով գծարարն թիւնի է, ինչպէս նաեւ միւս քառակուսի փակագծեալները:

հասանին, ոմն արվեստագործ կոչես որ առանց սրտէլէմիլ անհեղ ջերմիքի քաշէ. ետոյ հաւկիթի ջերմութեան տակ Հայր Իկնայտիոսն:

Այս սուրբ ոգնէփի պատկերն վրդանէս եպիսկոպոսին յիշատակն է, երբ նկարէի ինքն ետես և կամեցաւ որ իւր անուամբ ուղարկեմ այս պատկերն. և 3 օսկի տվաւ վասն փէրվազի. այս 3 օսկին պարոն պետրոսին տվի որ բերէ հրամանուցդ տայ:

Իս մին խաչուլութեան փոքր պատկեր կայ. վաղուց ժամանակէ մնացեալ էր, որ է վերապատուելի հայր անուոնին...

Խոնարհագոյն ծառայ և որդի
[պատկերահան] Թահանէս

Ամի տեառն 1743

Աբրիի 22

[Կ. Պոլիս]

ՃԻ.

Ահարկու և անգութ ինքնակալ Դահմազ Ղուլի խանի կամ Նատուշահի եղիւնալից կեանքէն (1736-1747) զարմանալի և հետաքրքրական զիպուած մը կը լսենք Հ. Պօղոս վ.է.:

Նամակին մէջ չենք գտնել Շահին հիւանդութեան անունը, սակայն մեզ կը թուի որ Զրգուղթիւն բլլայ, որովհետեւ իր վերջին տարիներուն մէջ ասկէ բռնուած բլլալը կը հաւաստուի: Անոր կեանքը, ինչպէս յայտնի է, սպանութեամբ վերջ կը գտնէ:

Գերայդեցեղոյ Տեսան Տեսան Մխիթարայ Աբրայի Հօրո մերոյ

... Դահմազղուլին հիւանդացեալ կոչեալ է զբժշկու. և ոչ ոք զնա կարացեալ է բուժել. և պատրի ոմն քափուճին գնացեալ առ նա՝ բժշկեալ է զնա: Իւ յետ որոյ աւսացեալ է պատրոյն. խնդրեալ յինչն զինչ կամիս. առ որ պատասխանեալ է պատրին թէ ես զգրամ ինչ ոչ խնդրեմ, զի հրաժարեալ եմ էս յամենայն բնից, այլ խնդրեմ ի քնէ, զի քայքայեցեալ եկեղեցիք մեր ի թիֆլիս շինեսցին: Իւ ասէ ճվ ալար զայնս՝ ասէ պատրին՝ Ղալիֆայն որ է հայոց կաթողիկոս: Իւ դահմազղուլի իսկոյն հրամայէ առածել յինքն զղալիֆայն. և տայ զնա երեք օր և երեք գիշեր կախեալ մնալ ի թևոց նորա. յետ այնորիկ հրամայէ նմա տալ պատրոյն 480 քսակ դրամ, եօթն հազար ուղտ՝ եօթն հազար շորի, եօթն վարիչ եզ, որպէս զի այնոքիւք շինիցին տապալեալ եկեղեցիք պատճառաւ զալիֆային: Դահմազացի կարգաւորք որք աստի գնացեալք եղեն յերկիրն իւրեանց՝ մեծօք փառօք մտեալք ի վանս և յեկեղեցիս, և տիրապետեալք են զնոսա. և յինչեւ ամենից զէմից իւրեանց, որք են 25: Բայց ի Հալէպ խառնակութիւն ինչ եղեալ իցէ, յորմէ արուսդայք հալածումն յարուցեալք իցեն: Բայց ըստ որում աստ ասի, և նա ուղղի: ...

յամի տեառն 1743

և մայիսի 28

[Կ. Պոլիս]

Գերայդայծառութեան ձերում
Նուաստագունեղ ծառայ
Ս. Մ. Ս. Հայր Պօղոս վարդապետ

1. «La Grande Encyclopédie», Tome XXIV, Paris.